Կը հարհաշի՛ն կամարներն իմացակերս սանարին,
Ուր անդրալոյս միտերու կ'ըլլար սեսիլք՝ կանքե՛ղ:

Նրկի՛ր, նրկի՛ր, յանուն հե՛ գաւակներուդ փրկութեան,
Թող բոցակեզ մորենին կանչէ Մովսէ՛ս մը կրկին,
Որ քառսին վրայ սա՛ սարածէ քելն անսահման:

Պարփակելու չափ աշխարհն՝ ըլլայ իր սիրքը բող լա՛յն...
Եւ աննուազ իր հոգին ըրած հազար հազա՛ր մաս,
Մանանայի պէս բաշխէ սովեայներուն բող համայն:

Զըլլայ երբեք մեկը կուէ՛ս, միւսը՝ նօթի անոր իով...
Նրանուրիւնն հաւասար՝ չմնայ սե՛նչ մը անհաս...
Նոր մարդկութի՛ւն մը, նրկի՛ր, արեւի լո՛յս օրէնքով...:

1939

ԵՐԿՈՒՆՔԸ ՄԱՅՐ ԵՐԿԻՐԻՆ

Երկի՛ր, երկո՞ւնք մըն է նոր, քե մախառու՛մն օրհասին,
 Որ ընդերքիդ՝ դղրդիւն, կու տայ հեւքիդ հեծեծանք...
 Խոցուած՝ էու սիրտդ է խորո՛ւնք, ուրկէ անդուլ կը հոսին
 Կեանքդ եւ կեա՛նքն անաւարտ՝ զաւակներուդ անժառանգ:

Տառապանքիդ դեմ՝ խոնարհ, վիշտիդ առջեւ՝ երկիւղած,
 Կը դնեմ ունկն հոգիիս ընդդէմ կուրծքիդ վիրաւոր...
 Ու մորմոխումն աղիքիդ, ցաւիդ նիչերն անիմաց,
 Կ'իյնան սիրտիս մէջ իբրեւ այրող արցո՛ւնքը իմ մօր:

Կը հրդեհեն, կ'աւարեն, կը յօշոտե՛ն քեզ անո՛նք
 Որոնց՝ բարիք անհաւե՛ւ, եղաւ զգուանքդ՝ շուրճիլ:
 Որոնց ազահ ցանկութեան ու ցոփանքին առջեւ սոնք՝
 Բացիր կուրծքիդ եղեմին հետ էու քեւերդ հիւրընկալ:

Ու ես եմ, ե՛ս եմ դարձեալ, զաւակդ՝ ածան վանառոււած,
 Հալածական ու զրկեալ, որ սերիս մէջ աննահա՛նք,
 Կործանումիդ դեմ՝ արցո՛ւնք, ու կսկիծիդ՝ սիրտ մը բա՛ց,
 Կ'ըլլամ անլուր աղաղակդ արձագանգող սրտում կանչ:

Ա՛հ, Մայր իմ, Մա յր, դաւանան հարուածներն այն անոպայ,
Որ զայրոյթով գեհեցի կը փեռեկսեն քեզ անյագ,
Կ'արիւնեն խի'ղնս... ու հաշուոյն եղբայրներուս ապագայ՝
Կու լամ աւերն սիւնիդ՝ անօրութեանս դեմ միտս փա'կ:

Այլ, մահդ է կեա'նք մը նորոգ... յարածնո'ւնդ ես արգանդ...
Անգօ'ր՝ ոնիրն է դժխեմ վիժուածքներուն դժոխի...
Կողկողանքիդ ընդմեջէն ես կը լսեմ սիրաւանդ
Հեւքն երկունքին մօտալուս որով կողե'րդ են յի:

1942

Ճ Է Պ Է Լ Մ Ո Ի Ս Ա

Վահան Թեֆեկյան բանաստեղծին՝
հիացումով ու սիրով:

Ճեպեյ Մուսա՛, Ճեպեյ Մուսա՛... դուն նոր վերջ՝
Հին վերհերու դեռ միացող ցաւին քով...
Արիւնագանգ յանգով հիւսուած դիւցազներգ,
Ու չերգըւած սուգի՛ ծով:

Ջաւահներուդ տուիր սլացք արծուաթել,
Ու բազուկներ՝ փառնդ յօրինող քար առ քար.
Այլ երբ եկան քեզի փարիլ հել ի հել,
Կայք մ'ապահով չունեցա՛ր:

Ջո՛ւր սփնեցան վերհիւսել բոյնն աւերակ՝
Բեկորներով երազներու քայքայուն,
Վերստեղծել՝ ինչ որ եղած էր նարակ
Դժոխքի սե՛ւ բոցերուն:

Հողիդ սիրտն բխած ամեն մեկ սօսի,
Որ կ'ընդունէր յոյսն հերոսի մը հոգւոյն,
Այժմ ամայի մեհեան մըն է, ուր յոյսի
Չ'առկայծիր ջա՛հ մ'իսկ թժգոյն:

Նրդիկներուդ երանածուփ ծուխին տեղ,
Ճարնասուն բո՛ցն է արդ անեծք ու բողոք՝
Ժայթքած ընդդէմ ժամանակին ժահրազեղ
Ու մարդերո՛ւն անողոք:

Անսրլաղ դեւն՝ աւերումի ուրուական,
Ածուներուդ, արտերուդ մեջ կը յածի,
Ուր դեռ երեկ, քրտնէն Հայուն յոգնաջան,
Կ'ողոզէր սե՛րմը հացի:

Լոյսերն ինչպէս՝ մեռած աչի մը բիբէն,
Կը բաժնուի՛ն արդ մշակներն հողերեդ...
Գահդ է կործա՛ն... հիմա որո՞ւ աղօթեն
Որ չտրե՛ մուքն յաւեռ:

Հողերդ առին ոսկի՛ն անոնց յոյսերուն,
Բազուկին ոյժն ու սրտի՛ւնն երակին...
Երեկն՝ երա՛զ, վաղն է անդո՛ւնդ մը անհուն,
Որուն դողո՛վ կը նային:

Քնարերգակ ու կապտաչուի ակերեդ,
Ստուերներէն պուրակներուդ խիտ ու զով,
Չայն մը խորունկ կը կանչէ յար զանոնք է՛ս,
Մօր մը այրո՛ղ կարօտով:

Ու կարօսն այդ պիտի մեծնա՛յ օրե օր,
 Օսարութեան մռայլ ու սո՛ւր վիճիւն քով,
 Պիտի այրի՛, խիղճի խայթի պէս հզօր,
 Ու չմարի՛ արցունքով:

* * *

Կ'երբա՛ն անոնք, սրտում ու լուռ ու խոհուն...
 Չարի ժառանգ, այլ բարիքի՛ սերմանող,
 Դափնիէդ շիւղ մ'իրենց սեղմած կուրծքերուն,
 Եւ հողերէդ՝ ասի մը հող:

Կ'երբան... Սիրտիդ սրտին յանկա՛րծ կ'առնե կանգ...
 Կը հեռանայ ծոցէն հպարտ սարերուդ
 Հոգի՛ն անոնց, որ չարիքին դեմ խոյանք՝
 Եղան մեր գա՛նձն անկապուտ:

Հնոցին մեջ նայուածքներու յեճադարձ՝
 Կ'այրին բիբերն յուղարկաւոր դարերուն...
 Ու զօրավիզ ունին միայն իրենց հարց
 Անիւնը դեռ բաբախուն:

Գառունահար սիրտերու պէս բացուած լայն,
Հիմա քափո՛ւր են շիրիմներն ուխտավայր,
Ուր կ'ընծայէր հողիդ անխոնջ նուիրման՝
Իր անդրանիկն՝ ամեն հայր:

Ի զո՛ւր ոտիս ու անոպայ ոտեր հո՛ն
Պիտի բերեն կասաղութիւն ու լուսանք.
Փառքի այգեն վերջ կ'իջնէ սե՛ւ երեկոն,
Այլ կը մնայ փայլիդ՝ անժա՛նգ:

* * *

Ճեպէլ Մուսա՛... Մուխ ու մեռւե... կը սուզի՛ն
Հիմա կողերդ ու կասարներդ դալար...
Կը ջնջըւին սակաւ գիծերը ձեւին,
Ու կը դառնաս գաղափա՛ր:

Անցեալդ՝ յո՛ւե, ըլլայ ներկայդ ո՛յժ մը մութ...
Եւ յուեն ու ոյժն այդ բող յաւեք բնակին,
Իբրեւ տեսիլք, զգայութիւն ու խորհուրդ,
Զարկերուն մեջ հայ միտքին:

Սարսուռն այն տալ, որ անուկեղ մեր միսի՛ն
 Կ'անցնի՝ ցաւի մեծ ալիքի մը նման,
 Թող արծարծի՛, որ անկրակ չմսի՛ն
 Գոնէ մարդե՛րը վաղուան:

Ա՛հ, չայաղի՛ն սիրտերն հուրեղ ջերմացած,
 Նայուածներու ներքեւ ցրտին ու օտար...
 Մուրի մեջ՝ լո՛յս, անօրութեան եղիւր հաց,
 Նոր կառոյցի՛ հիմնաքար:

Երազ մ'ուրիշ, նոր նահանջէն առած փայլ՝
 Արագածի կողերն ի վար բացող թել,
 Թող լեռնանայ հինին մոխրէն վեր մռայլ՝
 Կասարներով մեծարել:

Ճեպէլ Մուսա՛, Ճեպէլ Մուսա՛... դուն նոր վերք՝
 Հին վերքերու դեռ միացող ցաւին հով,
 Հերոսներու արեամբն օծուած դիւցազներդ
 Ու չերգըւած սուգի՛ ծով:

1939

Ծ Ա Ռ Ի Մ Ը Ծ Ե Ր

Ծա՛ն, կը նստիմ թելերուդ յոգնադողդոջ շուփին սակ,
 Ճակասս՝ ամիսս, ու թիկունս՝ անդաւանան բունիդ յեց:
 Հով մը անփոյթ՝ կասարեդ կ'անցնի կոհակ առ կոհակ,
 Եւ ստուերի ու լոյսի կ'իջնէ անձրել մ'արփայեդց:

Մասներուն սակ լռութեան դուն լարաբե՛կ ես քնար,
 Ուր մենութիւնը կու լայ մահն աւիշին հոսեւան...
 Ու ես քերթող մ'եմ սրտում, որ լռութեան մեջ բարբա՛ն
 Կու գայ փնտռել մեծ վիշտին համար կեանքի ու մահուան:

Արեւայրեաց հակասիդ՝ շանթն է դրեր սել սպին,
 Ու ճիւղերդ են թելաբեկ, սարիներէ՛ն պարսասուն.
 Խո՛ր աւելի՛ այլ չունին վերհերս իմ բո՛յժն արեւին,
 Եւ ուսերուս՝ բեռն է ծանր՝ մահասուրֆո՛վ ապրելուն:

Ծա՛ն, դուն ինձի հովանի, ու ես՝ շուփիդ եկած հիւր,
 Կը դիտենք պահ մը իրար, նոյն օրհնփին հարկասու...
 Երկու հոգի՛ նոյն ակէն նոյն ծարաւո՛վ խմած ջուր,
 Կեանքի կախարդ սահմանին կ'եղբայրանա՛նք իրարու:

Հոգիս ինչպե՛ս կը դողայ, երբ կը սարսե հովը քեզ,
 Ու կաթիլներ լոյսերու՝ արցունքի պէս կը թափին...
 Ծայրեն ամե՛ն մեկ ուսիդ կախուած է սի՛րքս կարծես,
 Ու կը նայի բունդ ի վար բացուած թո՛ւր պարապին:

Ծա՛ն, ահ ներե՛, նախանձին իջնէ սնուերը երե
 Աչքերուս մութ լինին մեջ, ուր հասակդ արդ կը սուզի...
 Արեւն արդար՝ չի ցաթեր, գուցէ երբե՛ք չցաթէ
 Վրան հողի մ'ուր փայլերս իյնան առանց յուզումի:

Օսարական ու անմասն, երբ ես հողին կը յառիմ,
 Կ'այրի աչքի՛ս մեջ հոգիս... Ամեն մարդ հոս ունի բո՛յն
 Օրորոցին իր մանկան, ու դագաղին իր՝ տիրի՛մ,
 Ու կը զգայ հոգն ոտներուն ներքեւ բերդի՛ մը հանգոյն:

Խարխուլ՝ իրա՛նդ է հիմա, պարպուած՝ բո՛ւնդ համովին,
 Բայց կը խրին բազուկներն արմատներուդ առանցուկ՝
 Ծոցին մեջ տա՛ն ու բեղուն՝ մայրագորո՛վ երկիրին,
 Որ զաւակիդ՝ սննտ, եւ ծերութեանդ է նեցուկ:

Ի՛նչ ունիմ ես— ծնունդես ի վեր թուառ ու անտուն—
 Որ կռիւին մեջ ահեղ ըլլայ ինձի զօրավիգ...
 Անհունութեան մեջ հիւլե՛ մ'եմ առանձին ու նկուն,
 Որ կ'առկախի կորուսի ծովերուն դեմ լեռնալիւի:

Այլ, մտածում մ'ըստիտիչ կը հովանցե՛ լուսահետ...
Ծաղկահասակ քե զառամ, հողի զաւակ քե օտար,
Ինչ որ կեանքեն եմ առած՝ հատուցանեմ պիտի ե՛ս,
Սև անկաօտառ ե մահուան զոնք օրե՛նքն հաւասար:

Պիտի հասակըդ՝ մոխի՛ր, ըլլայ մարմինըս՝ փոշի՛.
Մինչ՝ ֆերբուածն ուր եկանք, ծա՛ն, դուն ու ես հովե՛ հով,
Պիտի տանի գալիքին, մեջեն լոյսի, մեռլեի,
Քեզմե՛ ստուեր մը, ինձմե՛ սիրտ մը այրո՛ղ կարօտով:

1939

ԿՐԿԷՍ ԿԵՁՆՔԻ ՈՒ ՄԱՀՈՒԱՆ

Կեա՛նք, կը հեզնէ հարուածներդ՝ հպարտութիւնս հոյսեմ...
Թող հալածեն զիս անխոնջ՝ երկաքաձայն կրունկներդ,
Ու շառաչէ խարազանն օրհնեմերուդ անօրհն.
Խոյանքին դեմ ուժերուս՝ պիտի իյնա՛յ ամեն բերդ:

Վերհերեն՝ որ կը պեղեն քու մագիլներդ իմ մէջ,
Վերհերեն խոր ու կարմիր, վերջալոյսի մը նման,
Պիտի ցայտեն արիւնիս հետ իմ երգե՛րքս անվերջ,
Ու երգերովն այդ պիտի երթամ հպարտ՝ ես մահուան:

Հոգիս իսարոյկն է վառուած՝ արշալոյսի մը բոցէն,
Ու շառապանքը ձեռն է որ կը քափի իր վրան:
Անհատս հովերն օրերուն պիտի զայն միտս արժարձեն,
Պիտի բոցովը անոր՝ արեւեմ մո՛ւլք ապագան:

Աղե՛ղ՝ տենչերս են լարուած՝ կասարներու դեմ անհաս,
Նայուածքս նե՛սն է լոյսի, որ կը մեկնի հոգիքս,
Նետ՝ որ պիտի սլանայ կապոյտին մէջ հրարժարձ
Ու բեւեռուի դարերուն դեմ բոսոր ա՛ւսդ մը ինչպէս:

Համերգին մեջ հեռալուր՝ սիեզերքի հոգիին
 Պիսի իմ ձայնս առնագեղ ըլլայ կեռոյթ մ'յարասել,
 Ուրախութի՛ւնն սեղծիչ՝ եղբայրներուս որ անցնին
 Պիսի նամբէն պայքարի, սուրերու պէս, հոլաթիւ:

Իմ շունչիս հետ շասերուն կը զգամ շնչելը հիմա,
 Կ'երգեմ հոգիս, երգելու համար հոգի՛ն ես անոնց...
 Կ'անցնի ֆերթոզն, այլ ֆերթուածն արիւնասառ՝ է անմա՛հ,
 Ինչ փոյթ քե ծա՛նր ըլլայ հողն իր մարմինին վրայ խոնջ:

Ձեզի, ձեզի՛, եղբայրնե՛ր, հուրն ուժերուս յարանուն...
 Կը պարպուիմ ես ինձմէ, որ լիանա՛յ ձեր հոգին,
 Որ խիզախե իմ արիւնս արիւնին մեջ ամենուն,
 Մինչեւ փակուին աշուրներն այս դարերուն մարդկային...

1935

ՏԱՂ

ԱՆՆԱՀԱՆՋ ՄԱՔԱՌՈՒՄԻ

Անոյ՛, անո՛յ՛ է յոյսին ժպտիլ հեռուէն, կարօտով,
Պարպել սափորն հոգիիդ, յետոյ յեցուիլ վերստին...
Կանգնիլ լինի մ'ափունքին, ծառի մ'ընկեր բունին եով,
Տեսնել ստուերք մահուան, այլ մտածե՛լ միշտ կեանքին:

Երբ կայծակները շաչեն, հեղեղն ըլլայ շուրջը ծո՛վ,
Եւ ջուրերու մեջ մռայլ՝ ապառաժներն ընկղմին,
Միշտ գեղեցիկ է դառնալ, նայիլ յերան՝ անվրդով,
Ու մախառի՛լ վասն անկէ ծագելիք մե՛ծ արեւին:

Արեւալիդ դեմ ոգեսպառ, երբ ուղիներն ըլլան փակ,
Տեսնես նահանջն ուժերուդ աւերակէ աւերակ,
Այնպէս շե՛ղ է նորէն զինել բազուկդ անվարան:

Ընել շեփո՛ր մը հոգիդ ու զայն հնչել ծագէ ծագ,
Լարել աղեղը կամփիդ՝ նակասագրի՛ն յանդիման,
Եւ ընթանալ, կ'ընթանայ ինչպէս բանա՛կ մը համայն:

Ա Ն Ձ Ր Ե Ի Է Ն Վ Ե Ր Ձ

Շրտննջ մը մեղմ՝ որ կը լայննայ ծառէ ծառ...
 Անտառին մեջ՝ համանուա՛ցն իրերու...
 Ասուածուրիւնը տարբերուն՝ անսպառ
 Արարչութեան օրհնութիւնն յորդ կը հեղու:

Համակ կեռոյր է ժիր կանաչն անտառին,
 Ա՛սող մ'է կախուած շուրթէն ամեն տեւի,
 Հեռուն, տուներ ջահերու պէս կը վառին,
 Ու լուռ կ'երգէ հողն իր կարօտն արեւի:

Խայտանքն ինչպէ՛ս, ծաղիկներու շունչերէն,
 Աղօթի պէս կը փարթուի հովերուն...
 Միջոցին մեջ անյայտ ուժեր կը քելեն
 Ու բոյսերուն կու տան սարսուռ մը բեղուն:

Հեռուներէն՝ շունչը յոգնած զանգերուն...
 Չորերուն մեջ կես-երանգներ կը յածին,
 Ու կը ժպտի պահն յուզումով ակաղձուն.
 — Ո՞վ է կերթողն այս լուսասա՛ռ կերբուածին...:

Մութը կ'իջնէ տոնանտառին կողերէն...
 Հանդիսաւոր անդորրութիւն մը չորս դին.
 Լուրքեան հաւտ բաբախումին ընդմեջէն
 Ես կը լսեմ հեւնն յղութեան խորհուրդին...:

Մ Ո Ւ Խ ՈՒ Մ Փ Ա Ն Ք

Կապոյս բխումը ծուխին՝ գլանիկիս բուրվառեն,
 Կը բարձրանայ քեւաբաց մսածումի մը նման:
 Բոյր ու ձեւեր ու ձայներ հովերու պէս կ'արշաւեն
 Խորհուրդներու աշխարհէն եւ աշխարհէն ցանկութեան

Հոգիս մակոյկ ճ'է ծփուն, միջոցը՝ ծո՛վ հեշտանփի,
 Ու կ'օրօրեն գիս անվերջ՝ շուշանաքեւ ալիքներ:
 Փամերն անհուն կը սպասեն... բող ա՛լ լուսինը ծագի՝
 Ու քեւերէն ամպերուն կախէ երազ ու սուեր:

Հին դարերու շիրիմէն դառնան կեանքի՛ն վերսին
 Նուագածու ոգիներ եւ աղջիկներ՝ աղբիւրի.
 Մարմինն անոնց ըլլայ բո՛յր, երգը՝ շուշուր ցայգին,
 Որ ասդերէն, ջուրի պէս, միջոցն ի վար կը ծորի:

Ես կը լսեմ օդին մէջ բարախումներ՝ նուագի...
 Ու կը բացուին աչքերուս երանաւէ՛՛ս կղզեակներ...
 Սիրքս, աւուն անարեւ, զարունի պէս կը ծաղկի,
 Ու կը ծայրի՝ ցնծութեան զեփիւռներէն սարուբեր:

Քող հորիզոնը լայննայ եւ ալիքները շատնա՛ն...
 Լուսանցն ի վեր այս կեանքին, մշուշներու ընդմէջէն,
 Քող քեւածէ այս գիշեր, ալկիոնի մը նման,
 Իմ մսածումըս՝ գինով՝ գեղեցիկին գինիէն:

Ա Ն Շ ՈՒ Ն Ա Ց ՈՒ Մ

Հոգիս ծփուն ծո՛վ մ'ե այսօր կապուսաչուի,
 Ուր կը նաւէ լոյսէ կարապն երանութեան.
 Հոգիս կապոյս հո՛վ մ'ե այսօր, որ կը բացուի
 Կեանքի կանաչ դաւսին վրայ բազմաբուրեան:

Միտքս է խորան մ'որուն ջահին կ'իջնէ այցի,
 Անհետախոյզ խորհուրդներուն քո՛ւրմը խոհուն.
 Անտառ մը հոծ, ստուերամած, ուր կը յաճի
 Ոգին՝ պայծառ այլ չերգրւած նուագներուն:

Կ'անիմ այսօր, կը բազմանամ, կը տարածուի՛մ
 Մահկանացու իմ ձեւերուս ցանցէն անդին.
 Կ'ըլլամ երկինք մը բուրումի եւ արեւի,
 Ուր հաւեսութեան երփնալոյսե՛ր կը բողբոջին:

Կը զարնուի հոգւոյս քեւին անապաւէն՝
 Շե՛րս մը բոսոր, շունչ մ'հոգիէն անեզրական,
 Նե՛ս մը կարծես, մեկնած քաւիւս անհուններէն,
 Ու կը թռչի՛, հոգիիս հետ, անհունութեան:

1934

ՅԱՂՄՈՍ ԳՈՅՈՒԹԵԱՆ

Անհուն շնորհը կեանքին... Նստի ֆարի մը վրան,
Եւ ընդմեջէն ալեծուփ ոսկեփոշի մշուշին՝
Դիտել հեռուն, անսառին կանաչ բոցէ՛ն ալ անդին,
Սարի պէս սեւ ու սարի նման փայլուն սա նամբան:

Դիտնալ թէ ան պիտի գայ— երանութեան ծիածան—
Յանձնուած խենդ օթոյի մ'արկածաւեր խոյանքին,
Մարմինն ամբողջ բերկրութիւն, ամբողջ խայտա՛նք իր հոգին,
Եւ աչուրները՝ խոնաւ՝ արցունքներով անձկութեան...

Պահել ջիղերդ լարուած՝ սպասումով, կարօտով,
Բայց չսալ հարց թէ ուրա՞խ ես թէ տրտնա՛ւմ այդ պահուն,
Երբ կը զգաս դո՛ղ մը՝ միսիդ, ձայներ՝ միտքի՛դ մեջ խոռով:

Սիրել մշուշն ու անսառն ու իր նամբան գալարուն,
Սիրել եւ օդն ու ֆա՛րն իսկ, երփնափունջե՛րն ալ լոյսին,
Ուրոնք բաժակը կեանքիդ պահ մ'արեւո՛վ լեցուցին:

1933

Հ Ա Ր Ց Ա Կ Ա Ն Ի Մ Ը Դ Ի Մ Ա Ց

Իջեցուր լոյսն ու եկո՛ւր... ծխենք, ծխե՛նք իմ անոյ՛ւ...
Նա՛ւ մը՝ սենեակն է հիմա, մենք նաւորդներ ենք գինով,
Երկու հրդեհ՝ կես-մութին մեջ բռնկող հովե՛ հով:

Քննու՛տ, կննո՛ւտ, հովի պէս, մասները դի՛ր մազերուս.
Քրնար՝ մարմի՛նս է ամբողջ... սեղմե՛ հեւքին դեմ կուրծքիդ,
Պիտի ցայտէ, այս գիշեր, երգն աղբիւրի պէս վրնիս:

Շրթունքդ բե՛ր շրթունքիս... քարքիչներեդ կիսափակ
Թող որ հոսի սեւ գինի անդունդն ի վար հոգիիս:
Բայց կը քրջին աչուրներդ ու կը դողաս... Չմսի՛ս,
Երբ մասներուս սակ փլչի ներհակդ օղակ առ օղակ:

Հոգիս ոսկի է հալած ու կը մեկնի՛ մարմինեւ.
Մեծ ալիքներ կը բանան առագաստներ աչերուս.
Ա՛հ, կը սուղուինք, սիրակա՛ն, ափերն անվերջ կու սան խոյս...
Յաւերժութի՛ւնն է քե մահն՝ ուր կ'ընկղմինք դուն ու ես...

1934

ԵՐԳԵՑԻԿ ԼՌՈՒԹԻՒՆ

Այնպէս լո՛ւռ ե ամեն բան, կիսամութի սա պահուն,
 Այնպէս հանդարտ ու խաղաղ ու խորհուրդով բարաւուն,
 Որ հեռացող յոյսերու շոյանքներուն սակ վերջին՝
 Կ'ըլլայ նուազ մը խորունկ հեւքն անհառին:

Ու կը բացուին, յոյսի պէս, յիշատակի՛ ծաղիկներ...
 Կը մտածես դուն հիմա՝ հոս եր դարձեալ, այս ծառն էր,
 Որուն շուքին սակ եկան, երկու հոգի, դուն եւ ան,
 Մտիկ ընել երգն անընդմեջ լռութեան:

Յետոյ իջաւ մութն, ինչպէս վարսերն անոյ՛՛ աղջկան,
 Դողաց անհառը ցուրտէն, դողաց եւ օդը բուրեան,
 Ու լսեցիք, կուրծք կուրծքի, հեւքերուն մեջ իրարու,
 Հեռանուաղ ձայնը հոսուն ջուրերու:

Շունչէն՝ շունչիդ, մարմինէն՝ քու մարմինիդ առքեր, 1933
 Տարածուեցան բոյրերու խենդեցրնո՛ղ ալիքներ...
 Պարպուեցան այն ասեմ, բաժակին պէս ասդերուն,
 Չեր հոգիին աւազանները յորդուն...:

Ու երբ հիմա, մտախոհ, կը բափառիս առանձին,
 Լռութեան մեջ բաբախուն՝ շոնիներու գիւտերին,
 Հողէն, ծառէն ասդերէն, անձաւներէն մրութեան,
 Դուն կը լսես ձայնը անոյ՛՛ աղջրկան...:

ԿԱԽԱՐԴ ԳԻՇԵՐ

Գիշերն ամբողջ սրսմուքիւն, գիշերն ստուեր է ու լոյս.
 Կը ցայտէ կայծ մը մուքէն ու կը մարի՛ ջրասոյճ.
 Բուրվա՛ն՝ լուսինն է առկախ, եւ ասղերէն կը ծորին
 Լոյսեր՝ նման մումերու՝ մեռնող տղու մը բարձին:

Նստած եզերին առուակին, կարծես ասին օրերուս,
 Կը լսեմ հին երգերու շերտեր՝ ջուրին մէջ սնդուս.
 Եւ յիշատակն աղուաջեր՝ քու մասներուդ խռովին
 Իմ միսերուս ու միտքիս մէջ կը շրջի՛ վերսին:

Մեռցրնող բոյրը մազիդ, տենդն արիւնիդ տրոփուն,
 Կայծը կես-խուփ աչներուդ, հեւքն հոգիիդ շնչահեղձ՝
 Կ'ըլլան խենդ բոց մը, կ'առնեն զիս քեւերուն մէջ իրենց:

Եղեմին մէջ այդ բոցին, դժոխսին մէջ հովասուն,
 Կը մոխրանա՛յ, սիրակա՛ն, կեանքս արիւնող ամեն փուշ,
 Այս գիշերին մէջ խաւնկէ՛ կ'ըլլայ մեռնի՛լն իսկ անոյշ:

1934

Լ Ա Ւ Է

Լա՛ւ է երբեմբն այսպէս, ժխորներէ ձերբագաս,
Իջնել հոգւոյդ մտերիմ ներհաստենեակն առանձին.
Առնել հակասըդ ափիդ, յենիլ ծանօթ սեղանին,
Եւ օրերուդ մատեանին դարձնել էջերը հանդա՛րս:

Լա՛ւ է կրկին հանդիպիլ նայուածքներու սիրելի,
Որոնք սժգոյն թերթերու յուսանցքներէն կը ժպտին.
Լսել բառեր մոռցըլած, զանոնք յուսա՛լ վերստին,
Եւ զեթ վայրկեան մը շէնշո՛ղ տեսնել պարեզդ ամայի:

Լա՛ւ է ջանալ *այսօրի*դ մեջ քիչ մ'երէկրդ ապրիլ.
Քալել նորէն ուղիէն, ուրկէ անցար օր մը դուն,
Աչիդ՝ երա՛զ, եւ հոգւոյդ մեջ քրքրու՛մն աստղերուն:

Լա՛ւ, է նոյնիսկ, պահ մը հոն, եւ սերերուդ դեռածիլ՝
Հանդիպիլ ցո՛ւրս շիրիւմին... Ու երբ էջերն աւարտին,
Գոցել մատեանն յուզումով, ու մորմոքի՛լ դառնագին:

1933

Ո Ի Ր Ա Խ Ո Ի Թ Ի Խ Ն

Ուրախութի՛ւն, ունենայ քեզ լիովին ու անանց,
 Ըմպել գինիդ ցյազուրդ՝ անհնար է, անհնա՛ր...
 Կեանքին աղփա՛ս ու պզտիկ՝ չէ պարզեւուած այդքան զանձ.
 Ինչպե՛ս բռնել ափիդ մեջ արեւէն փուռը մը անմար:

Ուրախութի՛ւն, դուն խոստ՛ւմն ես երազին բոցեղէն,
 Փոքորիկներ պսակող հաւսութեան ծիրն երփնագեղ.
 Նե՛սը յոյսին՝ որ կամփի կը մեկնի պի՛րկ աղեղէն,
 Ու մաքառումն՝ ի խնդիր յաղթանակի մը շքեղ:

Ուրախութի՛ւն, անցեղ վերջ, երակներու մեջ գինով:
 Կ'այրի պապակ մը անեղջ, ու կարօտով կ'երկարին
 Շրթները մեր բոցակեզ՝ յիշատակի՛ աղբիւրին:

Ուրախութի՛ւն, քեզ փնտռել՝ նետուիլ է ո՛ղջ բովե բով...
 Այլ, վա՛յ անոնց, վա՛յ անոնց, թուառներուն հանապազ,
 Որ տօնելու պահ մը քեզ՝ ունին ոչ յո՛յս, ոչ երա՛զ:

Կ Ե Ա՛ Ն Ք, Ա Շ Ն Ե Ր Է՛

Մահուան մռայլը մեղմող՝ այգն է շուշան մը հսկայ...
Թարթիչն ի վար խոտերու կը կախուի ցողն իբր արցունք,
Ե՛րգ են ծառերը սրտում, ու հովիտներն ամբողջ խո՛ւնկ...
Կ'իյնայ վերջին արեւին առաջին շողն իմ վրայ:

Ինչպե՛ս կրցայ հաւատալ ես երազին որ երբե՛ք
Չեղաւ հոգի ու մարմին, չծայտեցա՛ւ պահ մ'ինձի.
Հետեւեցաւ ֆայլերուս միտս ուրուակա՛նն արիւնի,
Ու բացուող վիհն ամեն ժամ գաւ հոգիս քելաբեկ:

Օրերն առանց արեւի անօգուտ են, անօգո՛ւտ...
Ինչո՛ւ մուրալ ասդերեկն սարածամ շիր մը լոյսի...
Բանալ, բանա՛լ որ հոգիդ վարար գետի պես հոսի:

Եթէ աչքերս եղան կոյր՝ քու լոյսերուդ դեմ կապոյտ,
Թէ մօտեցար դուն ինձի ու փնտռեցի քեզ հեռուն,
Կեա՛նք, ահ ներե՛ք քեզ զսնել չգիտցող սա հե՛ք զդուն:

1935

Z U S ՈՒ Ց ՈՒ Մ


Ի՛նչ տուիր, կեա՛նք, դուն ինձի, ու ես երգի ի՛նչ տուի...
Տուիր աշխո՛յժ՝ արիւնիս, ջիզերուս՝ ո՛յժ պայքարի,
Միսքս քրիւ ջա՛ն մ՛որ համբաս գծէ լոյսովն իւ ծաւի,
Ու խնկամա՛ն: մը՝ իմ սիրսս, ուր սերս այրի, չսպառի՛:

Տուիր ընկեր մը անոյ՞, վհասուքեանս մեջ իմ յո՛յս,
Բարեկամներ՝ որ կանգնին բախտի նեշին դեմ վահան.
Աշխարհը տօ՛ն, մը քրիւ, երգ՝ երա՛նգ՝ ամեն բոյս,
Ու խնջոյ՛քիդ դարպասներն հոգիիս դեմ բացիր լա՛յն:

Կեա՛նք, փոխարէն՝ ճակատիդ բերի ես ո՛չ մեկ տափնի.
Եղայ սուտեր մը միայն՝ լուսանցքին մեջ պարտեզիդ,
Եւ հրաւէն: կոչունքիդ անցայ առա՛նց բաժնի:

Պէ՛տ չքսայ լինն օրերուս՝ շիք մը գոնէ մարգարիս,
Ու սահմանէն ավերուդ անցնիմ առա՛նց հասուցման,
Կեա՛նք, ընդունէ իբրեւ վարձ՝ սա ներբողեանն աննշան:

1938



ԱՂՋԱՄՈՒՂՋ



UNIVERSITY OF CHICAGO

Տ Ա Ղ

Խ Ո Ր Ե Ր Է Ն Դ Ժ Ո Ւ Ք Ի

Երկանաբար մ'ե հսկայ՝ կեանքն իմ յոգնած ուսերուս...
Գիտե՛ր, լուսինըդ հեզնա՛նք ու լուսփունդ է անե՛ծք.
Կը փակեմ աչքս ի զո՛ւր, որ սարսափեղ թամ ես խոյս,
Կ'ըլլայ մարմինըս դժո՛խք, զարկն արիւնիս՝ անդուլ հեծք:

Հոգիս իմ դո՛ւռն է բացուած մուք անդունդի մ'ահաւոր.
Անցորդ մ'հազիւ նայուածքին հեղուկ շաւիղն հոն ուղղած՝
Կը դառնայ ե՛ս որ երբեք չհանդիպի ա՛լ անոր,
Ու չբացուին քայլերուն՝ խորութիւններ մթամած:

Ծառերն այնքան մտերիմ՝ խօլասուներն են շրջուն.
Հովր՝ կապոյտ ջուրերուն կ'երգէ կարօք ինձի...
Օտար, օտա՛ր են հիմա լոյսերն անգամ սա համբուն,
Ու ծաղիկները՝ որոնք բիբերուս պէս սիրեցի:

Կ'ուզեմ փախչիլ ես ինձմէ ու մարդերէն ու կեանքէն,
Որ չլսեն օտարներ՝ խելառ նիչե՛րն ուղեղիս,
Որ միսերուս մեջ դադրի հոսիլ հեղուկն հրեղէն,
Ու երբ բացուի վարդն այգին, ժեռափունքի՛ն գտնեն զիս:

* * *

Գուցե աղջիկ մը անոյժ, լոյսերուն հետ առտւան,
Գայ թափառիլ քովն ի վեր վայրենագեղ ժայռերուն,
Շրթունքին՝ ե՛րգ մը սրտում ու մասներուն իր՝ շուշա՛ն,
Շուշան՝ հոգին կարգավարդ՝ հովերուն դէմ սարսուռն:

Երե աչքերն իր յոգնած՝ առնեն վրաս պահ մը կանգ,
Ճանչնայ երազն իր յանկարծ՝ քարթիչներու մութին սակ,
Ջրլլայ, չրլլա՛յ որ հպին իր մոմ մասներն՝ իմ անկեանք
Աչուրներու որ պիտի մնան լոյսին դէմ իր փա՛կ:

Պիտի վիճեան աղբերուող եղերագոյն իր հոգւոյն
Ջարնուի գո՛ւր՝ ականջիս աւազախից բաւիղին...
Թաց ու սգեղ պիտի հոն ըլլամ դիա՛կ մը, որուն
Սերն ու ոխերն յարանուն՝ կեանքէն ի մա՛հ կ'երկարին:

* * *

Երե ուժերս մեկնած չունենան դարձ մը նորէն,
Բազուկներու, սրունքիս սալու շարժում մ'առնագեղ,
Իմ շունչս, շո՛ւնչս դեռ սաք, անյայտ խորքի մը խորէն,
Պիտի հնչէ հեռալուր իբրեւ ողբերգ մը անեղ.—

«Սերն իր ծաղիկ մ'եր հուրէ, եւ իր արիւնն՝ անոր ցող.
Շնչաւոր ո՛չ մեկ էակ, վարդ առաւօտ մը գարնան,
Իր մասներովն ու շունչով սուաւ քերթին անոր դող.
Ոչ մեկ արեւ՝ անձրեւին դէմ իր բացաւ ծիածան:

«Յղաւ իր կեանքն՝ հրատն՝ն մեռելներու մխացող,
Տեսաւ ձեւեր դառնադէմ, լսեց կոչեր կռիւի,
Ու փերելի վերջ երազն՝ աղօսելու նոր Յարդգող,
Տուաւ հոգին երգերուն, երգերն՝ ափի՛ն այս ծաւի:

«Քեղեցկուքիւնր, որուն եղաւ յոգնած խուզարկուն,
Սքե չըլլայ, մահէն վերջ, հրակիզուող մորենին,
Չքանայ թեւն իր բոցէ՛ սեմին գալիք օրերուն,
Իր երգերուն մէջ պիտի ծխայ յաւե՛ս իր հոգին»:

* * *

Գուցէ շատեր, ինծի պէս, բոցատեսի՛լ հոգիներ,
Լարեն կամները իրենց՝ բարձունքներու դէմ անայց,
Ու զարնուած ժայռերու՝ իյնան բեկուն, կարեվեր,
Կամ փերաքիւր՝ միջոցին մէջ մահանան կայծ առ կայծ:

Բայց իմ արիւնքս կ'ըսէ— կը հաւատա՛մ ես անոր—
Թէ պիտի գան, պիտի գա՛ն զոք ուրի՛ց շողախէ,
Ինչպէս աստղերը կու գան ոլորներէ հեռաւոր,
Ու խոփն անոնց՝ նոր հերկով պիտի հին հողը պեղէ:

Հոգին անոնց՝ թեւաւո՛ր, ու հորիզոնն՝ այգածի՛ր
Պիտի ըլլայ, երբ անոնք դառնան Չարին դէմ բռն՝նցք.
Այլ եւ ըլլան պիտի հե՛զ, յաղթանակէն վերջ կարմիր,
Հաց՝ բաշխուող ամենուն, քնար ու գոյն ու բուրմունք:

Մարմինըս ջի'ղ է ամբողջ, շօտափելի'ք, լսելի'ք.
 Տեսիլքին դեմ հեռասոյզ՝ հոգիս համակ բիբ ու յօ'նք.
 Որոտումի մը նման, լայնցող ալիք առ ալիք,
 Բանակներու կը զգամ շարժն ու կը լսե՛մ ես զանոնք:

Խուլ դղրդիւն մը խորունկ կը ցնցէ հողն յօդ առ յօդ.
 Ռազմիկներու հրաբիբ՝ գուցէ գրոհն է վերջին,
 Բանաստեղծի մը հոգին, որ մահացաւ անձանօք,
 Կամ՝ նահաւակ ազգ մը հին՝ որ կը ծնի վերսին:

Կը յանձնուիմ ես հիմա — սրտն'ւմ, սակայն անխռով —
 Լօյսի մը պէս ջրասոյզ՝ խենդ ուժերու խորհուրդին,
 Գեռ ապրուած այս կեանքին ցաւն հոգիիս մեջ իմ ծով,
 Ու ծարաւովն արեւին, որմէ չառի՛ ես բաժին:

Սահմանաւոր իմ հոգիս, իր տենչերովն անսահման,
 Կը քեւածէ՛ երկիւղած... ու կը նայիմ մինչ ետին,
 Կը հեռանա՛յ կեանքն ինձմէ...: Չայն մ'անձրելի մը նման
 Կ'իյնայ կաթիլ առ կաթիլ, կ'ըսէ՛ — Մա'հն է վերածին:

Մ Ղ Ջ Ա Ի Ա Ն Ջ

Ճակասագրին անողոք՝ վերջին հարուածն է արդէն,
 Վերջին կոհակն անեծքի, որ երախներն իր բացած,
 — Անդո՛ւնդ, անդո՛ւնդ— կը գոռայ, կը պաղասի մինչ հեռուէն
 Ալեհեր ձայն մը յոգնած՝ «Տե՛ր, ազատե՛ իմ սրղաս»:

Մեծ վիշապներ մուրփին մեջ կը մռնչեն մոլեգին,
 Մահն ամենի մուրհերով կ'իջնէ, կ'իջնէ՛ իմ վրաս,
 Այլ կը հրնչէ հեռանոյժ ձայնը օտար նուագին,
 Որ պիտի քիչ մը մեղմէ ցաւն հարուածին վաղահաս:

Պիտի սուզուիմ... աչքերուս՝ այրող կարօտ սուրբին,
 Որ պիտի զիս կանչէ գուր, պատկերիս դեմ ծնրադիր...
 Երբ խորանայ գահավեժն, յետին լոյսե՛րն ալ մարին,
 Պիտի հոգին իր ըլլայ ջահ մը մուրփին մեջ անծիր:

Պիտի մեկնիմ... ինծի հետ միայն նշոյլն այդ ջահին...
 Ախարհը լայն ու յուսեղ ըլլայ գուցէ այն ատեն
 Անոնց՝ որ նե՛ղ բուեցաւ, անհրապոյր ու մրին՝
 Պզտիկ անծիս մեծ սերին աններելի յորդումէն:

Աղօ՛քբըդ, մա՛յր... որ ըլլայ նուազ խորունկ ու դաժան՝
 Կսցահարումը կարմիր՝ գղջումի սե՛ւ թռչունին:
 Յոգնած տղուդ ծանր էր շատ՝ քայել երկար այս նամբան,
 Գեհե՛ն՝ սիրոյ վարդին տեղ՝ գտնել դաժան փշեհին:

Եւ դուն՝ փլած մեհեանիս գահակործա՛ն դիցունին,
 Անցիր հանդարտ ու ժպտուն, քաղաքին պերն մայթերէն,
 Ի խնդիր թաց սերերու անիծապա՛րտ համբոյրին,
 Մոռցած խորանն՝ ուր հիմա լոկ ստուերներ կ'աղօթեն:

Ո՛չ, սիրակա՛ն, հոգիիդ՝ չայցելէ խա՛յթը խիղնին...
 Մի՛ թափեր թոյնը գազիր՝ սպաժաման արցունքիդ՝
 Զուրերուն մէջ, ուր պիտի ինձմէ մասեր թափառին...
 Թող վերջալո՛յսը միայն ցօղէ արիւն շիթ առ շիթ:

Հարկ էր գուցէ, մահուան մօտ, ըլլալ ներող ու բարի,
 Թողուլ հոգւոյս որ անցնէր ծիածանի մը գիծէն...
 Դա՛նն է սակայն, հրակայծ այս աչքերով՝ աշխարհի
 Մաղիկներուն ու լոյսին նայիլ մահուան մտուէն:

Դա՛նն է առանց պայքարի, յաղթանակի՛ մը շեղ,
 Տանիլ հրգեհն ուղեղիս՝ այս վաղաժամ շիջումին:
 Հոգիս իմ նե՛ս մ'եր լարուած, գոր չկրցի արձակել,
 Յանուն կապոյտ ու անհաս բարձունքներու տակաւին:

Ջարկերուն մեջ տարիֆիս փանրվե՛ց մուրհերուն,
 Ես կը լսեմ կետամբանն եղբայրներուս անշիրիմ ..
 Բայց հեռացա՛ւ լոյսն ինձմե... ու մութին մեջ լպրծուն;
 Աչքերս գոց, կը սուզիմ խորն անդունդին ռիտերիմ:

Հազիւ ավուրնն եմ հասած յաւերժատեւ գիշերին,
 Կը պոռայ նիչն արիւնիս՝ վերադարձի կարօտով...
 Ա՛հ, դառնայի, դառնայի՛ անոյ՛ց կեանքին վերսին,
 Ուր կ'աղօթե մայրս հիմա, մոմի մը ցուրտ լոյսին ֆով:

Դառնայի ե՛ս մեկ անգամ, ու լեցուէին աչուրներս
 Լեռներու լուրք կողն ի վար հոսող թոյրովն արեւին:
 Աչքերս, աչքե՛րս բուրվառ, ուր կը ծխայ դեռ իմ սերս,
 Հանդիպէին *աչքերուն*, իբրեւ շնորհ մը վերջին:

Արտօնեի՛ր ինձի, կեա՛նք, գեթ վայրկեանի մը համար,
 Ըլլալ կրկին բարեկամ՝ ծաղկած ծիծղուն ծառերուն,
 Սուրհերուն, բոյրերուն, գեփիւռներուն դաշնալար,
 Եւ ամային մեջ կոծող առուակներուն պաղպաջուն:

Ա՛հ, կ'ընդլայնի խորախոր՝ վիհը դատարկ աչքերով,
 Կը կախուի շուք մ'անբափանց՝ անեութեան ֆղանցֆէն.
 Յետոյ, սարսո՛ւռ մը ուժգին, թեւաբախո՛ւմ մը խռով.
 ... Պիտի հոսի՛ ալ հոգիս ժամանակին ընդմեջէն...:

ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ ՈՒ ԿԵԱՆՔԷՆ ՎԵՐ

Քիչ մը նուա՛գ, քիչ մը նուա՛գ, տենդագալար իմ ջիղերուս,
 Լուսափրփուր գիշերներու անմարդաձայն անդորուրիւն,
 Յայգախոով տալիղներու հոգի պեղող լարը տրտում,
 Եւ անջատու՛մն անանդրադարձ ու վերացում:

Ըլլալ օտար ու անհաղորդ՝ մարդերու պիղծ մաքառումին,
 Պահ մը վերէն նայիլ անմասն ամէն բանի եւ ամենուն,
 Կապոյտ կանթեղ մ'ըլլալ առկախ՝ մտուշին մեջ, եւ ընծայուիլ
 Լուսակառօտ հոգիներուն կաթի՛լ կաթի՛լ:

Հրաքոստ ումայ մը գինի, ումայ մը գինի՛ մոռացութեան,
 Ոգեբնակ սօսիներու շունչէն հոսող այց մը հովի,
 Եւ հնաւանդ անձաւներէն՝ վեպ մը սիրոյ հեզ ու բարի՝
 Մամռոտ ու մունջ ժայռերն ի վար քափուող ջուրի:

Ձերբազատուի՛լ մեծ մայքերու անդոհանքէն ու լոյսերէն,
 Փոսփորացայտ սկոյրներու յանախանքէ՛ն կապարաչուի...
 Պերն ու պոռնիկ ոստաններու սկեպիտակ խիղճէն հեռո՛ւ,
 Հոգւոյս անայց հովիտին մեջ քափառելու:

Կեանքս բարձո՛ւնք մ'ընել անհաս, հոգիս՝ ընկե՛րն ամայութեան,
 Սերս հրակեզ դրօշ մ'իբրեւ բանալ հովիցն դեմ տարութեւ,
 Ու չմուրա՛լ իմ քնարիս՝ գովքն ամբոխին ծովածաւալ...
 Օր մը հանդարտ ու ժպտադեմ մահն ունենալ:

Տ Ր Տ Մ Ո Ւ Յ Ի Ի Ն

... Եւ ամայութեանը մեջ հոգիներու պարեզին՝
կը շրջէր սուները սրամութեան:

Տրամութի՛ւն, սրամութի՛ւն, սրամութի՛ւն...

Դաւեճաւորումը ձայնիս, ու նայուածքիս հովանի,
Սուներ մ'ուրկէ իմ հոգիս կ'անցնի ամէն իրիկուն,
Հով մը յոգնած՝ որ հեւքիս կու տայ կեռոյթ մը քրքուն:

Տրամութի՛ւն, սրամութի՛ւն, սրամութի՛ւն...

Կապոյտ ծփանք մեռելի՛ յոյսերուն դեմ ծիրանի,
Արիւնող դարձն ամէն ժամ՝ մեծ ու մեռած յոյսերուն,
Եւ ամպերուն սափորէն քափուող երանգը ժպտուն:

Տրամութի՛ւն, սրամութի՛ւն, սրամութի՛ւն...

Անձրեւային մեղեդի, խունկէ շղարհ մը յուսնի՛
Հեքեաքներու պէս անոյժ հոգերգութիւնն ասղերուն,
Ու սօսափիւնն արձաթէ քարտիներուն բաբախուն:

Տրսմութի՛ւն, տրսմութի՛ւն, տրսմութի՛ւն...

Սպասումիս՝ հորիզոն, ու վիտերուս՝ հին գինի,
 Բեռն ու սաժանֆն օրերուս, այլ խոյանֆիս իմ աւիւն,
 Գանձը հոգւոյս՝ ընծայուող ամեն բոպէ, ամենուն:

Տրսմութի՛ւն, տրսմութի՛ւն, տրսմութի՛ւն...

Փխրուն հոգի մ'աղջկան, փայլ մը բեկուող դաւոյնի,
 Կարօտն հեռու համբոյրին, էջ մ'արցունֆով պատարուն,
 Մեծ փլուզում մը ներֆին... ու բաց շիրիմ մը խոկուն...:

Տրսմութի՛ւն, տրսմութի՛ւն, տրսմութի՛ւն...:

1934

ՀՈԳԻՆՆ՝ ՏՂՈՒ ՄԸ ՓՈՔՐԻԿ

Հոգիս երեկ կը ցաւեր: Կու լա՛ր հոգիս իր ցաւէն,
Փոքրիկ տղո՛ւ մը նման:
Իր վիճիցն ֆով՝ շատ պզտի՛կ էին վիճերը ամէն,
Մեռնելուն վի՛ճը անգամ:

* * *

Կի՞ն մըն էր ան, թէ երա՛զ, արիւնիս մեջ առած ձե՛ւ...
— Հարկ էր երբե՛ք չգիտնայ:

Անլոյս անձաւ մ'անձանօք՝ ուր իմ հոգիս, հեւ ի հեւ,
Ուզեց իջնել թեւածալ:

Երեկ, թէ դա՛ր մը առաջ, ստուերին տակ ծառերուն,
Հանդիպեցանք ես եւ ան.
Բայց օտարնե՛ր էինք մենք, ու մեր բիբերն երազուն
Ճանչնալ զիրար չգիտցա՛նք:

Փլաւ իմ կեա՛նքս այն ատեն, երկինք մ'իբրեւ ամպամած...
Ու մութին մեջ անտառին,
Ծփուն լոյսերը կարծես ըլլային յո՛յսս իմ մեռած,
Կամ իր նեո՛յլը վերջին:

Հոգիս մանուկ եր երեկ, ու չեմ գիտեր սակաւին,
 Թե կեանքն այդպէս, անդադար,
 Պէտք եր հոսեր մեռնելով, նման դաշտի առուակին,
 Կեանքը՝ մահե՛ն ալ դժուար:

Յիմար, յիմա՛ր իմ հոգիս... Կ'ըսե՞նք ամպին շառագոյն,
 Վերջալոյսին ոսկեհեղին,
 Գլանիկի մը ծուխին, հեզ ու ժպտուն բոյրերո՛ւն,
 Թե խենդի՛ պէս կը սիրենք...

Պէտք է կիները սիրել խորհո՛ւրդ մ'իբրեւ, լուսնայն,
 Մեհեանին մեջ այս կեանքին,
 Քնար մ'իբրեւ, ուր կ'երգէ, իր խինդն ու վիշտն յաւիտեան
 Տիեզերքի մեծ Հոգին:

1934

ՏԱՂ

ԿՈՐԾԱՆՈՒՄԻ ՈՒ ՄԱՀՈՒԱՆ

Օ՛, յոյսը, յոյսն աչագեղ, պահ մը ժպտող ու փախչող,
Անապատի մ'երկինքեն հոսող ջուրի մը նման...
Աւերակի մ'այցելու շիր մը լուսնի կապոյտ շող,
Յետոյ՝ խայթող աչքերով նորէն գիշերն անսահման...

Պիտի գայիր, սիրակա՛ն, խոնջ ու սրտում, այլ բարի,
Ու մարդերէն հալածուած մեր երազին պարտասուն՝
Պիտի ըլլար ժամանակն ոսկի սափոր գինիի,
Ու կասէր պահ մը պիտի ցաւն յարածամ մեռնելուն:

Պզտիկ բառեր կարօտի ու շունչներ կիսաձայն,
Մեր ներկային մէջ լեցուող իբր արձագանգն անցեալին,
Պատեին կեանքը պիտի՝ կործանումի ու մահուան,
Ուրկէ անցաւ արգաւանդ այլ անիծուած մեր հոգին:

Ինչ փոյթ, ինչ փո՛յթ, թէ խորո՛ւնկ ըլլար հարուածն օրերուն.
Արիւնքին մե՛նք կրկին արձագանգէն իսկ անոր...
Ա՛հ, ժպտի պիտի ես, ու ժպտիր պիտի դուն,
Եւ հաւատարեան ու սիրոյ պիտի բացուէր այդ մը նոր:

1935

ՀԱՅԿԱՆԻ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ինչպե՛ս կրցաւ իմ հոգիս բացուիլ անհաս այդ յոյսին,
 Նաւել անգիղջ քելերով՝ վիհերն ի վար կորուսի...
 Ինչպե՛ս ուժերս մեռած կենդանացան վերսին,
 Յանուն ասիին որ ինձի պիտի երբեք չըժպտի:

Հիմա հեռո՛ւ ես, օսա՛ր... ու ես օսա՛ր եմ կեանքին.
 Քու հոգիիդ ու հոգւոյս միջեւ անդունդ կայ ու մահ...
 Քայլերս ի գո՛ւր կը սենչան զսնել կեանքի նոր ուղին,
 Շէնքի մը պէս հոյակերս՝ ես կը փլչի՛մ իմ վրայ:

1935

Յ Ա Ճ Ա Խ Ա Ն Ք

Կ'անցնին ամպեր մսածումիս երկինքներեն.
 Կը շարժի շուք մը գիշերին մեջ տեսիլիս.
 Դուրսը պանդուխտ հովեր սրտում կ'եղերերգեն,
 Եւ անձանօք ձայն մ'անդադար կը կանչէ զիս:

Տանարին մեջ տիեզերքի՝ մումերն ահա՛
 Արտասուալից աչերու պէս կը նուաղին...
 Թռչուն մը մեծ սեւ փետուրներն իր կը բանայ
 Խիղնին վրայ հոն աղօթող մեծաւորին:

Ո՞վ կ'արիւնէ իմ յոյսերուս լիճը կրկին,
 Ո՞վ կը պեղէ խոյանքներուս դեմ անդունդներ...
 Միջոցին մեջ փոքորիկներ՝ կը բաւալին,
 Ու կոճակներ կը բարձրանան հոգիս ի վեր:

Լո՛յս մը կ'իյնայ զգայութեանս աչքին վրայ.
 Ո՞վ կը նայի իմ հոգիիս լուսամուտէն...
 Հոգիս՝ աղփատ ու քարուքանդ վանք մ'է հիմա,
 Ուր լոկ մահուան մուր ղողանջներ կ'անազանգեն:

Ինձմէ ծնած, ինձի ոտիս ուժեր դաժան
 Կը կուտակուին հոգիիս մեջ կասաղօրէն,
 Կը տարածուին երակներուս, կ'առասանա՛ն,
 Եւ իմ մեջ զիս անդարձօրէ՛ն կը փայփայեն...:

ԵՂԵՐԱԶԱՅՆ ՓՈՂ ՄԵԿՆՈՒՄԻ

Յոյսն արեւող ոչ մեկ գարո՛ւն, ոչ մեկ ժպի՛ս՝ ծաղիկներէն...:
 Ի՛նչ շահ երկար մաքառելէն, երբ հոգիիդ մեջ կը մարին
 վերջին մումերն ալ հաւաստիդ, ու գիտես թէ պիտի արդէն
 Չմատուցուի քու աչքերուդ՝ երանութիւնն արեւոյնսին:

Ինչո՞ւ սրտում դեռ յամենայ շիրմին առջեւ հին սերերու,
 Եւ կամ յառիլ նոր կարօտով՝ աղջիկներուն ու ասղերուն...:
 Մահէն ի կեանք չկայ նամբայ, հինն է յաւե՛ս քեզմէ հեռու,
 Եւ մարդերուն ու սարրերուն հիմա այնքա՛ն օտար ես դուն:

Հարկ է անցնիլ... Յուրս է այնպէս... Անբարեկա՛մ՝ կեանքի
 նամբան...:

Թող միսերուդ մեջ մեկնումին եղերաձայն փողերն հնչեն,
 Դեռ չսպառած՝ հպարտութեանդ եւ ուժերուդ վերջին լուման:

Հեռացիր հաց ու ժպտադեմ, ինչպէս արեւն՝ հովիտներէն...
 Եւ միգամած վսակներու անարեւոյնս ու ցուրտ ափին
 Թող յաւիտեան եղերերգէ յիշատակիդ գործ ուռեցին:

1933

Ե Ղ Ե Ր Ե Ր Գ

Կ'իյնայ սրտում, կր փերի պաղ հառազայք մը լուսնի...
Կ'ելլէ հողէն հեծեծանք մ'ու բարակ ծուխ մը կապոյտ...
Կարծես մասունք մը սուրբի ներսըդ քիչ-քիչ կը փլչի,
Ու մեռուներ քախիծի կ'իջնեն խորերը հոգւոյդ:

Մուրին մեջ լուռ կ'արտասուէ գիւտն ասդէ արցունքով,
Կը բերէ հովը հեռուէն կորսուած հին ողբերգներ,
Գիւղին տուններն են ամբողջ մարած ջահեր քովէ քով,
Ու նոնիներն օրօրուն՝ լացող կիներ սեւահեր:

Օ՛, խորութիւնը պահին, որ կը մեծնայ, կը մեծնայ,
Մինչ օրին մեջ լուսնայլ գոյութիւններ կը շրջին...
— Կարօտի դարձը գուցէ հոգիներուն հեռակայ:

Գուցէ տղու մը պանդուխտ անոնք նիչերն են վերջին,
Կամ բաբախումն համբոյրին՝ անսէր մեռած սերերուն,
Եւ կամ հոգին չերգրւած՝ բանաստեղծի մ'անանուն...:

1933

Բ Ա Ց Ա Կ Ա Ն

Իմ ջիղերուս անհառին մեջ փոքորկո՛ւմ մը նորէն...
 Կարօտի կանչ մը կրկին՝ այն եակին, որուն դեռ
 Չբերաւ աչքն՝ արիւնիս՝ երանութեան սարսուռներ:

Մերք կը կարծեմ ես լսել՝ սիրակարօս իր ձայնին
 Հեռաւոր հունչը՝ միտքիս անձաւներուն ընդմեջէն,
 Եւ մերք տեսնել ձեւերուն ուրուագիծերը նրբին՝
 Լոյսերուն մեջ, որ հիմա ծովին ծաղի՛կ կը քափեն...

Կը զգամ շնչիլը անոր, մերք ծաղիկի մը բոյրէն,
 Եւ մերք հեւքէն գիշերուան: Կ'ըլլայ այնքա՛ն մօտ կարծես,
 Բայց անձանօք, ու կ'անցնի, ասդի մը պէս լուսազէս...

Նքէ ստուե՛ր մըն է լոկ, զեփիւռներուն մեջ գարնան,
 Եւ կամ՝ կեանքի հովիտէն վիշտով մեկնած մը արդէն,
 Զգայարանքս ինչո՞ւ զայն յարածամ կը տեսնան,
 Աչերս ինչո՞ւ կը լեցուին իր բացակա՛յ զգուանքէն:

1933

Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Երանգներու հեղեղում,
Վարդ ու մեխակ հորիզոն,
Գոյներ զուարթ, բայց սրտն՝
Յիշատակի երեկոն:

Անարձագանգ լռութիւն,
Անշարժութի՛ւն հոսանուս.
Ծառերուն մեջ՝ իրիկուն,
Եւ իրիկո՛ւնն օրերուդ:

Ու նայուածքներ յետադարձ...
Ինչ խոր քախի՛ծ հին յուշի...
Օ՛հ այն տղան ծաղկաբարձ՝
Ծովէն անդին մտուշի...

Եւ ապագան, ապագա՛ն,
Որ մութին մեջ կը բացուի...
Ինչպե՛ս անցնիլ այդ համբան,
Առանց նշոյլ մ'արեւի...:

1934

Չ Ե Կ Ա Ի

Ժամերն անցան, դարերու պես,
 Եւ ան չեկա՛ւ...

Սեւե՛ր անցան մսածումես:

— Ինչո՞ւ չեկաւ:

Արեւն եղաւ հրդեհ մ'անբաւ,
 Բայց ան չեկա՛ւ...

Պահր սրտում մա՛հ մը լացաւ,
 Երբ ան չեկաւ.

Մոմիս լոյսին իջաւ այցի
 Նարեկացին.

Բայց ես ի զո՛ւր սիրսս իմ բացի
 Անհո՛ւն սիրսին...

Մարեցի լոյսս արսասուացող,
 Յոյսիս հե՛տ սի՛ն,

Ու մնացի սրսփաղող
 Եւ առանձին...

Երբ ա՛լ չեկաւ:

1933

ԱՆՑՔՆ ՍՏՈՒԵՐԻ ՄԸ ԿԱՊՈՅՏ

Սիրքսս հիւանդ է նորէն, սիրքս՝ սրտում ու մինակ.
Մանկունակ հով մը անփոյթ կ'անցնի նուազ մը շուրթին.
Կը սրսփան յուզումէ ձիթենիներն սպիտակ,
Ու կ'անուշնայ արիւնիս մեջ արիւնիդ մեղեդին:

Եկու՛ր, անցարդ մը ինչպէս, երազներուս շուրթին սակ.
Հոգիս՝ լնակ մը անշարժ, կ'ալեկոծի՛ վերսին.
Կարօտն անոյժ ձեւերուդ կ'անցնի կոհակ առ կոհակ,
Ու կը ծփայ հողմավար՝ մեռնող կարապը յոյսին:

Ջանգերուն հետ հեռալուր՝ անսառստոյզ կոչնակին,
Ու վերեւէն ջուրերուն, ես կը տեսնեմ լուսաթել
Անցնն ստուերի մը կապոյտ, խունկի ծուխի՛ պէս քերթել:

Ամայքն է ցո՛ւրտ, անարե՛ւ... Ինչպէ՛ս ըլլայ առանձին...
Երէ ստուերն այդ հոգի՛դ է պահ մ'ի՛նծի այցելու,
Իբրեւ ծաղիկ մը հուրէ՛ եկուր հոգւոյս բացուելու:

1934

ԱՆՀՆԱՐԻՆ Է ՍԱԿԱՅՆ

Անհնարի՛ն է սակայն... Օ՛հ, չես կրնար, չե՛ս կրնար
Քանդել խորանն ուր երեկ՝ ծխեցիր սերդ իբրև խուճկ...
Ինչպե՛ս յանձնել անունն իր ասելութեանդ հրավառ,
Մինչ հոգւոյդ մեջ իր հոգւոյն դեռ կ'ընծայես պաշտամունք:

Ջիղերդ ինչքան ալ ուժգի՛ն զինուին թոյնէն զայրոյթիդ,
Պիտի ձեռքերդ ու հոգիդ միշտ վարանին ու դողան.
Պիտի մեռւե մը պղտոր ծածկէ նայուածքդ վնիս,
Ու մութին մեջ արցունքնե՛ր պիտի իյնան բարութեան:

Ջանա երբե՛ք չլիւսել, չմոռնայով հանդերձ զայն.
Քու չարչարուած հաւասփիդ, Յսի՛դ համար, իբրև սուգ,
Մարե՛ ջահերն հոգիիդ, բայց ոչ մեկ բա՛ռ, ոչ մեկ ձա՛յն...

Կեցիր հպարտ, անայլայլ, հորիզոնին դեմ անյոյս,
Դիտէ յոյսերը մեկնող... յետոյ սուզուէ՛ դուն քու մեջ,
Ըսէ՛ նանանչ մ'եր անցաւ հորիզոնէն օրերուս...:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԱԼԵԶԵՐ

Տկարուքեան մեղեքուս, սարակոյսիս, երկիւղիս,
Ջիղերուս՝ ցո՛ւնց, աչքերուս արցո՛ւնք տուող յոյզերուս,
Կ'ուզեմ որ արդ յաջորդե հպարտութիւնք ներուս:

Իմաստութիւնն ալեհեր բող պահ մը զիս համբուրե...
Տառապանքիս՝ շնորհե բող տառապա՛նքը՝ դեղքափ...
Սորվիմ, ով կեա՛նք, չընկղմած մութ ջուրերու մեջ անափ,
Թե ցաւիս դեմ՝ ուրիշին ցաւն հոգեհա՛ց կը բուրե:

Սորվիմ բլլալ վիշտերուս հետ առանձին ու անձայն,
Մերժել սփոփն արցունքին, չվստահի՛լ բառերուն...
Նայուածքներու մեջ ժպտուն եւ կամ խոժոռ՝ տեսնել նո՛յն՝
Անձե՛ն բխած եւ անձին դարձող գորովն եսական:

Տրուի ինձի բող կեանքին ուղիներէն՝ բարձրավիզ
Անցնիլ հանդարտ վեհութեամբ, ցաւի՛ս անգամ ժպտելէն,
Եւ հողմածեժ հոգիիս նանչնալ հեզնա՛նքն ապաւէն...

1933

ԿԱՊՈՅՏ ԹՈՉՈՒՆ

Մեքերլինքի սեսիլին գուցե քոչունն եր ան բիլ,
 Զոր շնորհեց կարօսիս՝ օր մը գարունը բախսին.
 Եկաւ՝ վիշեկն մահացած երազներուս իբր հոգին,
 Մինչ ես երբե՛ք օր մ'իրեն չեի յուսար հանդիպիլ:

Ու լոյսերով անձանօք՝ ջահեց գիշերըս կրկին,
 Եզաւ առանցքն արփածիր՝ մսածուժիս ու սենչիս,
 Ե՛րգ մը՝ ցայսած՝ լռութեան սուներներէն, եւ հոգիս
 Գալարեց ծուխ մը իբրեւ, խորն իր կապո՛յս հմայքին:

Այլ, հեռաւոր ասիերու նոր գարունները ծաղկուն,
 Տուին անոր թւերուն սենչանք ու թա՛փ արեաւի,
 Ու մեկնեցաւ իմ կեանքէս իր կախարդանքը ծաւի:

Եւ այժմ երբ կը կանգնիմ սա կասարին, ու հեռո՛ւն
 Կ'ընդունւարեմ լայնաթել անոր փախուսն առյաւեք,
 Կը զգամ հոգւոյս ալ անդարձ թեւաչափո՛ւմն իրեն հետ:

1933

ՃԱՄԲԱՆԵՐ

Ա. ՈՒՐՈՒԱԲՆԱԿ ՃԱՄԲԱՆԵՐ

Օ՛, համբաներ բարեկամ, ու համբանե՛ր արիւնի,
Յեսոյ՝ սրտում, անձրեւոս, երազի մո՛ւր համբաներ,
Ու համբանե՛ր, ուր եղաւ նահանջի դեւն ինձ ընկեր,
Եւ դեռ համբան՝ որ պիտի վերջին կայփի՛ն զիս սանի:

Առանձնութիւնս անուրախ ձեզմով լեցուն է այսօր...
Հոգիս անսենչ՝ է հեւեոս երկինք մ'առանց արեւի,
Որ երէկիս ու վաղուան վրայ խոժո՛ւ կը բացուի,
Ու ձեր ոգին անոր սակ կը թափառի՛ գլխիկոր:

Ես՝ ներկայէն յոգնաբեկ, ու գալիքէն՝ անբաժին,
Կուզեմ երգել ձեր լոյսերն ու սուտերները խոնարհ,
Դեռ չարձակած ուժերուն նեւն անթիրախ սլացփին:

Եկե՛ք, եկե՛ք վերսին, ու դարձուցե՛ք ինձի է՛ս
Տղան՝ վնիս նայուածով, տղան զոր ա՛լ չեմ նանչնար,
Եւ որ գուցէ քիչ օրէն մեկնի անդա՛րձ ինձի հետ...:

1933

Բ.- ՄԵՐ ՏԱՆ ՃԱՄԲԱՆ ԽԱՂԸՆԿԵՐ

Պա՛րզ, ինչպէս կեանքն այն ասեմ, եւ անժխոր բայց ժպտուն,
 Կ'երկարեւ նե՛ղ այն նամբան, ցերեկն՝ ընկե՛ր անմեկին՝
 Արեւին սակ բողբոջող մանուկներու խումբերուն,
 Ու գիշերներն՝ ունկնդիր՝ առուակին ե՛րգ հեփեաթին:

Այս իրիկուն, մոռցուած հին տեսիլքի մը նման,
 Կամ նաւաբեկ հոգիս իբրեւ երիզ մը կապոյտ,
 Ես կը տեսնե՛մ այդ նամբան...: Պիտի նանչնա՛մ սա տղան,
 Սեւ ու սիրուն աչքերով տղան՝ լոյսի՛ պէս անփոյթ:

Հոն, շրջանա՛կ կը խաղայ, տուած մազերը հովին...
 Օ՛ր, շրջանա՛կն երկաթե, ու փողոցի այդ տղա՛ն,...
 Ինչպե՛ս մոռցեր էի զայն, հօրս համբոյրին պէս վերջին:

Այլ երբ հասնի մեկնումի ժամն, ու հնչե՛ն զանգակներ,
 Պիտի ուզեմ որ փակուող աչքերուս դեմ պահ մը գան
 Այն հին տղան ժպտադեմ ու մեր նամբան խաղընկեր:

1933

Գ. ՃԱՄԲԱՆ ԼՈՅՍԻ ԵՒ ՍՏՈՒԵՐԻ

Ծառերով, լոյսերով, ստուերով սա նամբեն
Կ'անցնի զոյգն հեռանոյ՛ ի Երազի՛ մը նման.
Կ'անցնի զոյգը անդարձ, մինչ անոնց ԵՏԵԼԷՆ
Կը հոսի իմ հոգիս մուրին մեջ հողմաձայն:

Գիշերին մեջ իմ միսֆս ե վսա՛կ մը վնիս,
Ուր կ'իյնան թերթ առ թերթ ծաղիկներն անցեալին,
Ծաղիկներ՛ր բիւրեղե, իբր արցունք ու ժպիս,
Ու մուրին մեջ պզտիկ լոյսի պես կը բացուին:

Կը սեսնեմ ես կրկին հեռաւոր այն տղան,
Որ հոգւոյն մեջ սեսի՛լք, ունեւ հո՛ւր աչքերուն.
Քայլերուն իր ընկեր՛ քայլն անոյ՛ յաղջկան,
Շրթներուն՝ սրսմազեղ ու բեղուն լուրբիւն:

Կը նայիմ ես իրեն, ինչպէս ծովն՝ երկինքին,
Ու կարօտն աչքերուս՝ կ'ըլլայ ե՛րգ մը սրտում.
Կը նայիմ ես իրեն, ինչպէս մահը՝ կեանքին,
Ու կ'ըլլայ վիճն իմ մեջ հրկիզում մ'անդադրում:

Ըլլայի, ըլլայի ես կրկին այն տղան.
 Ըլլայի՛ր դուն աղջիկն սպիտակ հոգիով.
 Քայլերուս՝ ու կայլերդ ըլլային բարեկամ,
 Անցնեինք երգեցիկ այս նամբէն հովե հով:

Մոռնայինք մեռցնող առօրեան յիսերիմ.
 Տենչերուդ՝ իմ տենչե՛րս ըլլային միշտ սահման.
 Անցնեինք ժպտելով այս կեանքէն՝ երազին,
 Անցնեինք միասին՝ երազէն ալ մահուան:

1935

Դ. ԿԱԽԱՐԴ ՃԱՄԲԱՆ ՀՆԱԴԱՐԵԱՆ

Սա ճամբային հնադարեան,
Որքան մարդիկ եկան անցան...
Ու փոռեպատ որքան դարե՛ր
Իրենց քայլին հե՛սքն են ձգեր:

Ի՛նչ փոյթ ինձի, քե՛ ունեից
Ի՛նչ գոյն ու դեմք, զի բոլորին
Կուրծքին ներքեւ կը բաբախեր
Սի՛րս մը անուշ, եւ ոյս կամ սեր:

Խնդո՞ւն էին քե՛ հեծկլսուն,
Քաջ ու առո՞յգ՝ քե՛ պարսասուն.
Ունեի՞նք սենչ, երազ ու ե՛րգ,
Թե՛ յոգնած հեւք ու միայն վերք:

Ի՛շխան էին կամ իմաստո՞ւն,
Թե՛ վարձկաններ էին անուն.
Եղա՞ւ աշխարհն իրենց սեղան,
Թե՛ կոչունքի յոյս մը միայն:

Ուրկե՞ մեկնած, ու՞ր կ'երթային.
Ինչ սե՛նդ կ'այրեր իրենց հոգին.
Յաղթանակի՞ քե՛ պարսուքեան
Կ'իջներ փոռին իրենց վրան...:



Մինչ անցեալին մեջ խորասոյզ
Կը յաճի միսքս ուղեկորոյս,
Կը զգամ յանկարծ, յուզմամբ հրկեզ,
Թե կ'որոնեմ ինկզի՛նքս այսպէս:

Թեեւ այսօ՛ր միայն կ'իյնայ՝
Նայուածքիս հետ՝ շուքս իր վրայ,
Բայց սա նամբան, ես կը խորհիմ,
Ինձի հինե՛նք ե մտերիմ:

Ա՛հ, կը յիշե՛մ, երազի պէս,
Թե այս նամբէն անցեր եմ ես.
Թեեւ տարսամ, բայց կը նանչնամ
Իմ քայլերուս դոփի՛ւնն անգամ:

Արեւն, անտո՛ւլտ, վայրերն այս նո՛յն
Կ'օժեք բոյրովն իր շողերուն.
Աստղերն ի վար, յուսինք հեզ՝
Լոյսի թելով կ'երկնէր բեհեզ:

Կանգնած եզերքն այս նամբային,
Ծառեր ուրի՛՛շ շուք կու տային.
Բայց նոյն ժայռե՛րն են թխագոյն
— Վիթխարի խոկն հին դարերուն:

* * *

Քանի, քանի՜ դարեր առաջ,
Ո՞ր աղեղին, որմե՞ լարուած,
Եղաւ հոգիս նե՛սն ու քու
Այս վայրերէն հնահամբաւ:

Ինչ՞ ձեւ ու ձայն եւ յոյզերով,
Կեանքին հանդեպ հա՛՛ւս քե խոռով,
Եւ քանի դար յե՛տոյ, նորե՛ն,
Պիտի անցնի՛մ այս համբայէն:

Հովերուն մեջ պիտի մնա՞յ
Շունն զմր գեթ, հեւքիս վկայ,
Պիտի զսնե՞մ, քարերուն մեջ,
Մտածումես կա՛յծ մը անե՛ք:

Եթէ քայլեն ուրի՛շ մարդեր,
Կախարդ համբուն կողերն ի վեր,
Եւ հե՛տերուս մեջ զիս հանչնան՝
Պիտի կոչե՞ն ի դասասան:

* * *

Կը հարցընե՛մ ինձի հիմա,
Ու սիրսու ահո՛վ կը հեկեկայ.
—Ո՞րն է ցնորք, ո՞րն իրական,
Անցո՞րդն արդեօք, քե իր համբա՛ն...:

Ճ Ե Պ Ը Ն Թ Ա Ց

Կ'եռուզեռա՛յ սենչերուս շոգեկարսան հրաւեկ,
 Շոգեկարսան՝ գոր կեանքիս հուրովն անդուլ սնուցի,
 Շոգեկարսան՝ ուր հիմա կը փրփրի ու կ'անի
 Կիրքն՝ անդուհղներ չափելու եւ սուրալու սանձաբեկ:

Մսածուսիս մեջ անքիւ ուղեգիծե՛ր կ'երկարին,
 Ուղեգիծեր՝ անձանօք աւխարհներու խուզարկու,
 Ուղեգիծեր՝ ուր անվերջ կը յաջորդեն իրարու
 Ճեպընթացներն հոգիիս խելակորոյս բանակին:

Օ՛, դեռ որքա՛ն պիտի զիս նեսեն այսպէս սարե սար՝
 Ուժերն այդ մութ՝ քաւալող գահավեժե գահավեժ...
 Ինչո՞ւ զնացն այս յիմար՝ ուղիներու մեջ յաւերժ:

Երե վազն այս խօլական պիտի սեւե դեռ երկար,
 Եւ հանգրուան մը պիտի դրօշն ինձի չբանայ,
 Թող ամեն ինչ մոխրանա՛յ սեւ արկածով մը հիմա:

1933

ՎԵՐՁԻՆ ՇՆՈՐՀ

Ջո՛ւր հոգիիս մեջ հոգիդ փայփայեցի, սիրեցի,
Անունդ առի շրթունքիս, որպէս ծաղիկ մը բուրեան.
Սիրեցի քեզ, կը սիրե ինչպէս ուխտւորն իր նամբան,
Ինչպէս նօթին՝ փուռէն դուրս ծաւալող բո՛յրը հացի:

Հոգիդ՝ խեցի՛ մը պղտոր՝ զոր յուսացի ես ի գո՛ւր
Փոխել սերիս ովկիանին մեջ սասափի մը վնիս.
Խեցին խեցի՛ մնաց, սե՛ր... ու հահիճին մեջ կեանքիդ՝
Անվերադարձ սուգունեցաւ հոգիես մաս մը մա՛մուր:

Բայց ընդունա՛յն՝ ամեն ջանք... Կարելի չէ մոռնալ դեռ
Սերդդ՝ միսիս մեջ խրած բունաւոր շե՛ղբ մը իբրեւ,
Սերդ՝ անձաւին մեջ կեանքիս՝ բռնուն մը կոյր, ժանսաթեւ,
Սերդդ՝ լնա՛կ մ'արջասպի, իմ ծարաւիս առընթեր:

Մսածումես՝ անբաժա՛ն եթէ վիռկն ստուերիդ
Պիտի մնայ յաւիտեան, ունեցիր գեթ գրութեան
Վերջին նշոյլ մը եւ բո՛ղ, գիշերին մեջ անվախեան,
Յանախանքեդ ձերբազատ, ըլլայ իմ նի՛նջըս հանգիս:

ԵՔԷ ԿԱՆՔԵՂ ՄԸ ԱՆԳԱՄ

Կ'անցնիմ նորէն մքասուեր անձաւներէն այն վիհին,
 Ուր ես իջած եմ յանախ հոգիիս հետ միամինա՛կ...
 Բոյսերու սել աչերէն նեխած ջուրեր կը կաթին,
 Ու չղջիկներ կը նշեն գեջ փարերու փւիւն սակ:

Օ՛ սրսմութիւնը եջփն՝ խորերն ի վար անարեւ,..
 Գուցէ լոյսին ի խնդիր, որ սուզեցաւ հոն անհետ,
 Գուցէ ձայնին՝ որ կու լայ հիմա փարի մը ետեւ,
 Եւ կամ յանուն այն տղուն՝ այնտեղ թաղուա՛ծ առյաւեհ:

Դեռ մինչեւ եր՞բ պիտի հոն մուրն աճդադար խսանայ.
 Զրկա՞յ ասուպ մ'որ անցնի նակասագրիս երկինքէն
 Ու մռայլին դեմ միտփիս բանայ լոյսի ժապաւեհ...
 Երբ կանթե՛ղ մ'իսկ պիտի ծաղիկն իր հոն չբանայ,
 Երբ սարերը լուծուին պիտի լոյսի կարօտէն,
 Անյայտ ուժեր փարերար թող զիս այժմէ՛ն կործանեն:

1933

Խ Ն Կ Ա Մ Ա Ն

Աղջկան մը հողիին

Քանի մը քար լիւեր՝ հողակոյսի մը վրան,
Եւ անանուն փունջ մը բոյս՝ կ'ըլլան շիրիմն աղջկան.
Մինչ հովիտին մեջ կեանքի ծաղիկ մ'եր ան ասղացող,
Արեւին սակ՝ ժայտադեմ ու լուսնին հետ երազող:

Սերս իբրեւ ա'չքն Ասուծոյ, առանձ կարօսս իրեն հետ,
Արդ կը սուզի սա հողին մուայլ խորերը նամեհ...
Շի՛ք մը՝ լոյսեն աչքերուն... յիշատակի քերք մը վա՛րդ...
— Փոշի՛, փոշի՛... Եւ հեռուն՝ հեզնող պարապը լազուարք:

Ու կը միա՛յ միտքս հիմա, խնկամանի՛ մը հանգոյն...
— Ո՞ւր են մասները մարմար, ո՞ւր՝ իր վարսերն արեւոդ,
Ու քրունկները լուսա՛ մոռացումն ինձ պարզեւող:

Երա՛զ ծաղիկ մ'եր գուցե, որուն քերքերը սժգոյն
Առին հովերն աստուան, մինչ սակաւին կը ծփան,
Կամարներուն սակ հոգւոյս, իրմե բոյրե՛ր սրբազան:

1933

ԵՐՉԱՆԿՈՒԹԻՒՆ

Երջանկուքի՛ւն, երազիս եղերազե՛ղ սիրունին,
 Փերեցաւ նաւն հոգիիս՝ քու հեճֆերուդ հեճապինդ...
 Խարակներու շեղբերէն շրքներս ահա կ'արիւնին,
 Գեռ չծրձած շրքներուդ մեղրաբաժակը յակինք:

Փնտնեցի քեզ արեւին եւ ամպերուն մեջ մըրթին,
 Հոգիիս մեջ ու հոգւոյն՝ երկրի բոլոր իրերուն:
 Ամենուրեք, բոլորին հոգիին խորն ու սիրտին՝
 Գրսայ ես բո՛ցը միայն՝ քու կարօտիդ յարանուն:

Թե այցելու մըն ես դուն՝ մոլորակե մը օսար,
 Փունջ մը լոյսի՝ որ մուքին մեջ կը բանայ ծաղիկներ,
 Հանդիպեի՛ր հոգիիս գեթ վայրկեանի մը համար:

Կարօտդ իմ մեջ անօրի բռչուն մ'ե սեւ, գիւտակեր,
 Որ կը կսցէ անդադար... Երջանկուքիւն, ով խո՛րք մայր,
 Երանուքիւնն համբոյրիդ ինձի ընդմի՛շտ զլացար...:

1933

ՀՈԳԵՆՈՒԱԳ

Երբ ես մեռնիմ, վա՛րդ մը միայն՝ դազաղիս,
Մօրս հոգիին կարօտի ցողը վրան...
Ճերմա՛կ ըլլայ... Եւ գոյներու ո՛չ մէկ գիծ՝
Արիւնավառ վերջալոյսէ մը զարնան:

Ո՛չ զանգակներ եղերածայն, ոչ նուռ՛գ.
Բարեկամներ՝ միայն քայլէն ինձի հետ.
Յետոյ, հանդարտ, աւերակէ աւերակ,
Հոսի հոգիս մոռացումին մէջ անհետ:

Ո՛չ շարական, ոչ խուճկ ու մում, ոչ արցունք...
Անտառին մէջ պիտի հովերը նորէ՛ն
Երգեն իրենց հոգեճուազը խորունկ,
Պիտի նորէ՛ն ծորին լոյսեր աստղերէն:

Պիտի երկիրն ընթանայ միտս իր ծիրէն,
Պիտի ծաղկի եղբււանին Մայիսին,
Պիտի դարձեա՛լ զոյգեր անցնին մայրերէն,
Ու ցնծասան մէջ փրփրի ցոփ գիւնին:

	Էջ
Հարցականի Մը Դիմաց	86
Երդեցիկ Լուսութիւն	87
Կախարդ Գիշեր	88
Լա՛ւ է	89
Ուրախութիւն	90
Կեանք, Ահ Երէ՛	91
Հատուցում	92
ԱՂՋԱՄՈՒՂՋ	
Տաղ՝ Խորերէն Դժոխքի	95
Մղձաւանջ	99
Կեանքին Հետ Ու Կեանքէն Վեր	102
Տրամութիւն	103
Հողին Տղու Մը Փոքրիկ	105
Տաղ՝ Կործանումի Ու Մահուան	107
Յաճախանք	109
Եղերածայն Փող Մեկնումի	110
Եղերերգ	111
Բացական	112
Իրիկուն	113
Չեկաւ	114
Անցքն Ստուերի Մը Կապոյտ	115
Անհնարի՛ն է Սակայն	116
Իմաստութիւն Ալեհեր	117
Կապոյտ Թռչուն	118
Ճամբաներ	
Ա. Ուրուարնակ Ճամբաներ	119
Բ. Մեր Տան Ճամբան Խաղընկեր	120
Գ. Ճամբան Լոյսի Եւ Ստուերի	121
Դ. Կախարդ Ճամբան Հնադարեան	123
Ճեպընթաց	126
Վերջին Շնորհ	127
Եթէ Կանթե՛ղ Մը Անդամ	128
Խնկաման	129
Երջանկութիւն	130
Հողենուադ	131



Տ Պ Ա Ր Ա Ն « Ռ Ռ Ռ Ռ Ս »
Պեյրուք - Հալեպ

18
ՊԵՅՐՈՒՔ
ՀԱԼԵՍ
1918

5-1 7 V

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

« ԱՐԵՒ-ԱՆՁՐԵՒ » (Բերթուածներ), Պէյրուք, 1933

Գին՝ 3 Լիբ. Ոսկի

Handwritten signature

Հայրի՛ SARKIS ABDALIAN

**P. O. Box 1239
BEIRUT, LEBANON**

Գ Ի Ն

**ՍՈՒՐԻԱ-ԼԻԲԱՆԱՆ 4 ԼԻԲ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 2 ՏՈՂԱՐ**

**Գուհաստոր քլիշեներու պատրաստու թիւն՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԽՍԻՆԱՆԻ**

[12504]

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



220036229

A $\frac{11}{36229}$